Սեյրան Ա. Զաքարյան
Փիլ. գիտ. դոկտոր

ԱԶԳԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՏԵՍԱԲԱՆԸ

Միքայել Վարանդյանի ծննդյան 150-ամյակի առթիվ*

Բանալի բառեր - Միքայել Վարանդյան, ազգային կեցության պարադոքսներ, ազգայնություն, միջազգայնություն, ազգային արժեքներ, ճակատագիր, կրավորականություն, ուծացում, կեղծ հայրենասիրություն:

Մուտք

19-րդ դարի երկրորդ կեսը և 20-րդ դարի սկիզբը հայ իրականության մեջ նշանավորվեցին սոցիալական ու ազգային շարժումներով, սոցիալիստական գաղափարների տարածմամբ և իբրև դրանց հետևանք՝ ազգային ու միջազգայնական հոսանքների ձևավորմամբ:

20-րդ դարասկզբի հայ հասարակագիտական միտքը, որը հիմնականում ուներ սոցիալիստական ուղղվածություն, սկսում էր քննարկել ազգին, պետությանը, պետական կառուցվածքին, պետության մեջ ազգերի կարգավիճակին և նրանց փոխհարաբերությանն առնչվող հարցեր՝ ընդսմին դրանք դիտարկելով պատմության շարժիչ ուժերի, սոցիալական շարժումների ընթացքի ու հեռանկարների, **ազգայնության**[1] ու **միջազգայնության**, ազգայինի ու համամարդկայինի հարաբերակցության համատեքստում: Քաղաքական կյանքի հիմնական դերակատարների՝ ազգային սոցիալիստների ու սոցիալ-դեմոկրատների և նրանց դեմ ճակատ հարդարած հայ բոլշևիկների հարցադրումների հիմքում ընկած էր պատմության մեջ ազգերի խաղացած դերի, պատմության շարժիչ ուժերի, հասարակության կառուցվածքի, հասարակական խավերի գործառույթների, ազգային ինքնության կառուցատարրերի փոխհարաբերության մասին ըմբռնումների տարբերությունը: Հայ մարքսիստ տեսաբանները կարծում էին, որ դասակարգայինն ու միջազգայ-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.02.2020:

1 19-րդ դարի երկրորդ կեսի ու 20-րդ դարի առաջին տասնամյակների հայ ազգային-քաղաքական միտքը (Մ. Նալբանդյան, Ռաֆֆի, Մ. Վարանդյան և այլք) սեփական քաղաքական ձգտումների առանցքն է համարել **ազգայնության գաղափարը**: Ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա հիմնվող այս ճշգրիտ բանաձևումից կատարվող գիտակցված կամ չգիտակցված շեղումներին վերջ դնելու համար մենք պարտավոր ենք վերհիշել ՀՅ Դաշնակցության մեծ տեսաբան **Միքայել Վարանդյանի** ժառանգությունը, որի 150-ամյակը լրանում է ներկա՝ 2020 թվականին: Խմբ.:

նությունը գերակա են ազգայինի հանդեպ, և ազգայինն ընդամենը դասակարգայինի դրսևորման ձևերից է, հետևաբար դրանց բախման ժամանակ նախապատվությունը պետք է տալ դասակարգայինին ու միջազգայնությանը. «Ազգային և միջազգային սկզբունքների ընդհարման ժամանակ, ընդհանրապես խոսելով, պետք է ասենք,- գրում է Ստեփան Շահումյանը,- որ մեր համակրանքը պետք է լինի, պարզ է, միջազգային սկզբունքի կողմը: Այդ բխում է պրոլետարիատի օբյեկտիվ, տնտեսական դրությունից. նա այն դասակարգն է, որ մարմնացնում է իր մեջ միջազգայնության գաղափարը»[2]:

Ի հակադրություն այս տեսակետի՝ ՀՅ Դաշնակցության տեսաբանները[3] համոզված էին, որ ազգայնությունն ու միջազգայնությունն իրար չեն հակասում, ուստի դրանք **համադրելի**, **փոխլրացնող** երևույթներ են: Դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը կախված է ազգի առջև ծառացած խնդիրների լուծման հերթականությունից: Ուստի նախ պետք է լուծել ազգային խնդիրը, այնուհետև՝ ծավալել դասակարգային պայքար: Ազգայնության և միջազգայնության հարաբերակցության տեսանկյունից էին նրանք լուսաբանում նաև ազգային գիտակցությանն ու ազգային արժեքներին աղերսվող հիմնահարցերը: Այս հարացույցի հիմքում ընկած էին «ազգ», «հայրենիք», «ազգային պետություն», «ազգային մշակույթ», «ազգային արժեքներ ու ավանդույթներ» և ազգային որակվող այլ հասկացություններ, իսկ միջազգայնական (ինտերնացիոնալ) հարացույցի հիմքում՝ «դասակարգ», «մարդկություն», «համամարդկային արժեքներ» և այլն:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ եվրոպական երկրներում ու Հայաստանը ներառող տարածաշրջանում ծավալված ազգային-ազատագրական շարժումները և Հայկական հարցի միջազգայնացումը նոր մարտահրավերների ու փորձությունների առջև էին կանգնեցրել հայությանը՝ գործնականում ցուցանելով նրա հոգեկերտվածքի, բնավորության գծերի ու վարքաձևերի առավելություններն ու թերությունները: Հայության քաղաքական ու մշակութային վերածնության պայմաններում 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի հայ գործիչներն ու մտածողները՝ Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյանց, Ռ. Պատկանյան, Ղ. Ալիշան, Ռաֆֆի, Գր. Արծրունի, Մ. Օրմանյան, Դ. Անանուն, Գ. Խաժակ, Ստ. Շահումյան և այլք, իրենց աշխատություններում, վերլուծելով և գնահատելով հայության մասնակցությունը քաղաքական գործընթացներին և հատկապես

2 **Շահումյան Ստ.**, Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան, «Երկերի լիակատար ժողովածու հինգ հատորով», հատ. 1, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 255: Այդ շրջանի սոցիալիստների, այդ թվում՝ Շահումյանի համար առաջնորդող էին գերմանական մարքսիստների վետերան Վիլհելմ Լիբկնեխտի հետևյալ «գեղեցիկ խոսքերը». «Մեզ, սոցիալիստներիս համար գոյություն չունի ազգությունների խնդիրը: Մենք ճանաչում ենք միայն երկու ազգություն. մի կողմից՝ կապիտալիստների, բուրժուազիայի, իշխող դասակարգի ազգությունը, իսկ մյուս կողմից՝ պրոլետարների, բախտից հալածվածների, բանվոր դասակարգի ազգությունը… Բոլոր երկրների բանվորները կազմում են մի ազգություն՝ հակառակ մյուս ազգության, որը նույնպես մի է բոլոր երկրներում» (Մեջբերումը ըստ **Շահումյան Ստ.**, Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին, «Երկերի լիակատար ժողովածու հինգ հատորով», հատ. 2, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 425):

3 Տես, օրինակ, **Խաժակ Գ.**, Ի՞նչ է ազգութիւնը, Կ. Պոլիս, «Արծիվ ժողովրդական գրավաճառանոցի» հրատ., 1912: **Ֆրանգեան Ե.**, Հասարակագիտական էտիւդներ Հ.Յ. Դաշնակցութեան սոցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողութեան հիմնաւորման շուրջը, Բագու, «Արամազդ» տպ., 1917:

նրա վերաբերմունքն ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, հընթացս դիտարկում էին նաև հայոց ազգային նկարագրին աղերսվող հարցեր:

Այդպիսի մտածողներից էր ՀՅ Դաշնակցության ականավոր տեսաբան-գաղափարախոս և նրա անձնուրաց մարտիկների «անզուգական հերոսագիր»[4] **Միքայել Վարանդյանը** (1870-1934), որը հայությանը վերաբերող հարցերը դիտարկում էր ինչպես հայոց պատմության ու մշակույթի և ընթացիկ քաղաքական իրադարձությունների, այնպես էլ պատմության փիլիսոփայության, սոցիալական մարդաբանության, պատմական հոգեբանության և ազգային ու միջազգայնական գաղափարախոսությունների հարաբերակցության համածիրում: Այսպիսի մոտեցումը նրան հնարավորություն էր տալիս նախ և առաջ անցյալ-ներկա-ապագա ժամանակային համատեքստում վերլուծելու հայոց վարքագծի և հոգեկերտվածքի՝ խառնվածքի, բնավորության, մտածելակերպի, ազգային կեցության ու արժեքների տարբեր դրսևորումները: Ազգային կեցությանը վերաբերող երեք գլխավոր հարցերից՝ **ի՞նչ էինք անցյալում, ի՞նչ ենք ներկայում** և **ի՞նչ պիտի լինենք ապագայում**, Վարանդյանն առավելապես ուշադրությունը կենտրոնացնում էր ներկայի և ապագայի վրա: Ավելի ստույգ՝ **առաջին՝** անցյալն ու ապագան ածանցվում էին ներկայի իրողություններից, թեև վերջիններս բացատրելիս թռուցիկ հիշատակվում էր նաև անցյալը[5]: **Երկրորդ՝** նա դրանք դիտարկում էր համաշխարհային իրադարձությունների ու պատմամշակութային երևույթների, ազգերի պատմական զարգացմանը և տեսական մտքին ներհատուկ օրինաչափությունների ու ընդհանրացումների լուսածիրում: Ի լրումն այս ամենի՝ Վարանդյանը սոցիալիստական վարդապետության հետևորդ ու պաշտպան էր, ուստի վերջինիս հիմնադրույթների ճշմարտացիության մեջ համոզվածի ոսպնյակով էր վերլուծում ընթացիկ իրադարձությունները, սոցիալիստ մտածողի մտահոգություններով ու տեսլականներով էր գնահատում անցյալի ու ներկայի իրողությունները, այդ թվում՝ հայոց նկարագրի առավելություններն ու թերությունները:

1. Ազգային նկարագրի ձևավորման ու բյուրեղացման պատմամշակութային համատեքստը

Պատմական, հասարակագիտական ու ազգաբանական հարցերը մեկնաբանելիս Վարանդյանն առաջնորդվում էր հետևյալ պատմափիլիսոփայական հիմնադրույթներով:

---

4 **Թիւթիւնճեան Խ.**, Միքայէլ Վարանդեան (Հ.Յ.Դ-եան տեսաբան-գաղափարախօսը), «Հայրենիք», Պոսթըն, 1936, N 4, էջ 97: Վարանդյանի կենսագրության մասին տե՛ս նաև **Խուդինյան Գ.**, Միքայել Վարանդյան (Հովհաննիսյան), «Հայկական հարց» հանրագիտարան, Եր., «Հայկական հանրագիտ.» հրատ., 1996, էջ 432:

5 Ընդ որում, անցյալը հաճախ իմաստավորվում էր սոցիալիստական վարդապետության դիրքերից: Օրինակ, Վարանդյանի կարծիքով, ամենուր թագավորներն իրենց հարազատ ժողովուրդների համար եղել են «դահիճներ», «հոյակապ ոչնչութիւններ», ուստի երբ արևմտահայ «աղմկարար» հայրենասերները հրապարակավ փառաբանում էին հայոց արքաներին, նրանք, փաստորեն, փառաբանում էին «ռամկավար մարդկութեան մէջ մեռած, ջնջւած՝ արքայի կուլտը, պաշտամունքը…» (**Վարանդեան Մ.**, Վերածնւող հայրենիքը եւ մեր դերը, Ժընեւ, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան, 1910, էջ 146):

1) Պատմությունը հակամարտ դասակարգերի և ազգերի բախումների, սոցիալական ու ազգային շարժումների շղթա է, որոնք այնքան անխուսափելի են ու ճակատագրական, որքան բնական երևույթները:

2) Մարդկության մեծ մասը գտնվում է երեք բռնակալ ուժերի՝ կղերականության, միահեծան բռնապետության և Փողի իշխանության տակ: Կղերական դասակարգի և միահեծան բռնապետության դեմ պայքարը հաջողությամբ ավարտվել է. խորտակվել է կղերականության հեղինակությունը, տապալվել են բռնակալական կարգերը, մարդկությունը ձեռք է բերել խղճի ազատություն ու քաղաքական իրավունքներ, և այժմ հերթը հասել է Փողի իշխանության տապալմանը, տնտեսական անհավասարության ու ստրկության վերացմանը: Այդ խնդիրը կոչված է լուծելու միջազգային սոցիալիստական շարժումը:

3) Փողի իշխանության դեմ պայքարը չի նշանակում անտեսել ազգային խնդիրները, հակադրել ազգային ու միջազգայնական գաղափարախոսություններն ու շարժումները: Ազգայնությունը և սոցիալիզմի վարդապետությունը ոչ թե հակադիր են ու բացասում են իրար, այլ միանգամայն ներդաշնակ գաղափարներ են, մի տեսակ «փոխադարձ լրացուցիչներ». «Ազգային զգացումը, հայրենիքի գաղափարը **սօցիալիստ**ական վարդապետութեան մէջ սրբագործուում են, ընդունում են վսեմ ու ջինջ կերպարանք... Ոչ մարդատեաց, վնասակար **շովինիզմ**, ոչ էլ ծոյլ, դատարկ **կոսմոպոլիտիզմ**, այլ անաղարտ **հայրենասիրութիւն**՝ միացած ինտերնացիոնալիզմի կամ **միջազգայնութեան** գաղափարի հետ - ահա ժամանակակից ճշմարիտ ինտելիգենտ մարդու դաւանանքը»[6]:

4) Ինչպես բնության, այնպես էլ հասարակության մեջ գործում է բարեշրջության (էվոլյուցիայի) օրենքը. պետությունը, հասարակությունը, բարոյականությունը, կրոնը մշտապես փոփոխվում ու հեղաշրջվում են՝ տեղի տալով նորանոր ձևերի, ծնունդ տալով նորանոր դավանանքների: «Տիեզերական էւոլիւցիան իր ջնջող ու վերաշինող ալիքների մէջ» (Մ. Վարանդյան) փոփոխում է նաև ազգային կեցության հիմնատարրերը՝ մարդաբանական, հոգեբանական գծերը, «ազգային ոգի» կոչված առեղծվածային մտակառույցը. «Սակայն այդ փոփոխութիւնների հետ միասին և չը նայեած մարդկային կենսապայմանների աստիճանական հաւասարեցման երկրագնդի բոլոր ծայրերում, չը նայեած կրթութեան ու քաղաքակրթութեան «հարթարար» ազդեցութիւններին,- իւրաքանչիւր ազգի էւոլիւցիան, զարգացումը, ընթանում է, այնուամենայնիւ, իր յատուկ աւազանով, կրում է այնուամենայնիւ իրեն յատուկ տիպդրոշմը, պահպանում է իր ուրոյն **անհատականութիւնը**, համապատասխան այն ջոկ, ուրոյն, զարմանալի բիոլոգիական տարերքներին, որ թագնւած են ամեն ազգի սերնդէ-սերունդ ժառանգւած, նախնաւանդ, պապենական սաղմ-

6 **Վարանդեան Մ.,** Հայրենիքի գաղափարը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1985, էջ 66:

նանիւթի մէջ…»[7]: Սա նշանակում է, որ, ըստ Վարանդյանի, ազգային ինքնությունը ոչ թե մեկընդմիշտ տրված, նախաստեղծ հատկությունների, այլ ստեղծվող, ձևավորվող, զարգացող ու փոփոխությունների ենթարկվող **նույնականացումների ամբողջություն է**: Ինչպես ազգը, այնպես էլ ազգային գիտակցությունը, ազգային ոգին ու գաղափարախոսությունը պատմամշակութային կյանքի զարգացման արգասիք են:

Վերոբերյալ դրույթների լուսաբանումում դիտարկելով քննարկվող հարցերը՝ Վարանդյանը հանդես էր գալիս որպես ազգային կեցության աշխարհիկ (լուսավորական) հարացույցի պաշտպան: Ի տարբերություն հայոց ինքնության **կրոնական հարացույցի**, որում կենտրոնական տեղը վերապահված էր եկեղեցուն, հավատքին ու դավանանքին, Վարանդյանը, հետևելով 19-րդ դարի երկրորդ կեսի հայ լուսավորիչներին, նախապատվությունը տալիս էր ինքնության **աշխարհիկ հարացույցին**, որում գլխավոր դերակատարները ազգը, հայրենիքը և աշխարհիկ արժեքներն են (ժողովրդավարություն, գիտություն, աշխարհիկ կրթություն, խղճի ազատություն և այլն): Վարանդյանի բացասական վերաբերմունքը կղերականության և եկեղեցու, այլ խոսքով՝ ազգային ինքնության կրոնական հարացույցի նկատմամբ պայմանավորված էր **նախ՝** նրա արմատական լուսավորական աշխարհայացքով, որում գերակայում էին գիտապաշտությունն ու գործնապաշտությունը և կրոնի քննադատությունը, **երկրորդ՝** հայոց պատմության մեջ և ազգային կյանքում Հայաստանյայց առաքելական եկեղեցու և հոգևորականության դերակատարման՝ սոցիալիստական (իր հիմքում՝ լուսավորական) վարդապետության և հեղափոխական դիրքերից կատարվող գնահատմամբ: Իբրև լուսավորական փիլիսոփայությունից սերող հակակղերական ավանդույթի շարունակող՝ նա պաշտպանում էր հետևյալ դրույթները.

1) Դասակարգային հասարակության մեջ ձևավորվում է կղերական խավ, որը մշտապես ծառայում է իշխողներին. «Կրօնը, այո՛, բոլոր կրօնները, ի դէմս իրենց սպասաւոր դասակարգերի, դաշնակցել են միշտ հզօրների հետ, թիկունք են եղել աշխարհի բոլոր բռնակալութիւններին, և առերևոյթս հաւասարութիւն ու եղբայրութիւն քարոզելով, արշաւել են միշտ այդ հաւասարութեան ու ազատութեան դէմ՝ թէ տեսական մտքի աշխարհում և թէ քաղաքական ու սոցիալական շարժումների մէջ»[8]:

2) Կրոնը բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում «սրբագործում էր մտքի եւ սրտի ստրկութիւնը», իսկ «կղերական դասակարգը», լինելով աշխատավոր ժողովրդի գլխին «ահաւոր խարազան», կոչված էր «շահագործելու մարդ-էակի

7 **Վարանդեան Մ.**, Վերածնւող հայրենիքը եւ մեր դերը, էջ 395:
8 Նույն տեղում, էջ 266:

հոգին ու թանձրամած տգիտութիւնը, շահագործելու այն երկիւղը, որով համակ-ւում էին մարդիկ՝ բնութեան ահեղ ու խորհրդաւոր ուժերի հանդէպ…»[9]:

Ունենալով այսպիսի հայացքներ կրոնի և հոգևորականության մասին՝ Վարանդյանը կարծում էր, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին «չունի և չի կարող ունենալ այն դերը ազգային զարգացման պրոցէսի մէջ, որ վերագրում է նրան մեր փարաջաւոր ու անփարաջայ կղերը: Անցեալում, անշուշտ, նա խաղացել է որոշ դեր ազգութեան պահպանութեան գործում, բայց այսօր ռամկավարութեան և գիտութեան մթնոլորտի մէջ նոր **ազգային արժէքներ** են հրապարակ գալիս, որոնց առջև նսեմանում է եկեղեցու դերը: Աւելին կասենք: Լուսաւորչականութեան **հաւատի** տեղ՝ մենք կը քարոզենք ազգութեան, հայութեան **Սէր**»[10]: Նրա կարծիքով՝ այսուհետ ոչ թե կրոնական, այլ աշխարհիկ այդ նոր արժեքներն են իմաստավորելու մարդկանց կյանքը, համախմբելու ազգի անդամներին և նրանց մղելու հայրենանվեր ու հերոսական գործողությունների:

Այսպես՝ մի՞ թե մարդու համար կա ավելի վեհ բան, քան Հայրենիքի գաղափարը. «**Մի դիւթական բան կայ այդ գաղափարի մէջ,-** գրում է Վարանդյանը,**- որ միշտ հմայել ու ցնցել է ժողովուրդներին, հասցրել է նրանց խանդավառութեան գագաթնակէտին եւ պատճառել է ահագնադողորդ սասանումներ… Պատմական ծանր փորձութիւնների ժամին, երբ հայրենական օճախի վրայ յանկարծ փչում է կործանարար հողմը, երբ բռնաւորի դժնդակ ուրւականը նկարւում է հորիզոնի վրայ և հնչեցնում ռազմի շեփորը,- նա է, այդ կախարդական գաղափարի ուժը, որ մի ակնթարթում ի մի է գումարում մարդկանց անհամար լեգէոններ, մղում է նրանց դէպի փոթորկի յորձանուտ հոսանքը, դէպի յաղթութիւն կամ դէպի կորուստ**… (ընդգծումը մերն է - Ս. Զ)»[11]: Եվ քանի որ Հայրենիքի գաղափարը կապված է ազգի, ազգային հավաքական գիտակցության ձևավորման ու հասունացման հետ, ուստի նա փորձում էր հայոց ինքնության հարցերը դիտարկել ինչպես ազգի, այնպես էլ ազգային մշակութակերպի ու ազգային նկարագրի ձևավորման համածիրում:

Վարանդյանի կարծիքով՝ թեև դժվար է սահմանել ազգությունը, այդուհանդերձ կան մի շարք գործոններ՝ ընդհանուր ծագում, ֆիզիկական ու հոգևոր նմանություններ, ընդհանուր տարածք, կրոն, լեզու, ընդհանուր պատմություն և այլն, որոնք առանձին-առանձին կամ մի քանիսը կամ բոլորը միասին որոշակի պատկերացում են տալիս ազգության մասին: Ինչպե՞ս և ե՞րբ են ձևավորվել, կազմակերպվել ու կոփվել ազգը և ազգի հավաքական գիտակցությունը կամ ազգային ոգին: Վարանդյանը, չցանկանալով խորանալ հարցի «ծագումնաբանական» քննության մեջ, այնուամենայնիվ նշում է, որ

9 **Վարանդեան Մ.**, Բողոքը նորագոյն պատմութեան մէջ, Ժընեւ, հրատ. Հ. Յ. Դ., 1911, էջ 18:
10 **Վարանդեան Մ.**, Վերածնող հայրենիքը եւ մեր դերը, էջ 281-282:
11 **Վարանդեան Մ.,** Հայրենիքի գաղափարը, 19-20:

Հայրենիքի, ազգի, ազգայնության, ազգային պետության գաղափարը պատմական զարգացման հետևանք է: Սկզբնապես մարդիկ ապրել են հոտերով, տոհմերով, գերդաստաններով, ցեղերով, որոնց միաձուլմամբ ձևավորվել է ազգը՝ իր ուրույն մշակույթով, լեզվով, կրոնով, ավանդույթներով ու սովորույթներով: Ազգն անհատների հավաքածու չէ, այլ օրգանական մի ամբողջություն, որի առաջացումը կապված է ոչ այնքան նյութական-քանակական, որքան սոցիալ-հոգեբանական այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են ներքին փոխադարձ համակրանքը, զգացմունքների նմանությունը, կամքերի ներդաշնակությունը, համազգային համագործակցությունը և այլն. «Իւրաքանչիւր մի ազգ ունի մտքերի եւ զգացումների մի ինքնատիպ հիւսւածք, որ առաջ է գալիս համայնքի ու անհատների մշտնջենական փոխազդեցութիւնից: **Մտքերի, զգացումների եւ կամքերի** այդ հիւսւածքն է, որ անցնելով ժառանգաբար սերնդից սերունդ՝ կազմում է ժողովրդի ոգին, **ազգային գիտակցութիւնը**»[12]:

Վարանդյանը կարծում էր, որ ազգային գաղափարը դրսևորվել է դեռևս հին աշխարհում և միջնադարում, սակայն «թույլ, երկչոտ» կերպով: Օրինակ՝ միջնադարում եվրոպական ժողովուրդները գտնվում էին կաթոլիկ եկեղեցու գերիշխանության տակ, ուստի այդ ժամանակներում ազգերը գոյություն ունեին իբրև «ցեղագրական միութիւններ»՝ առանց ազգային ինքնագիտակցության: Իսկ «Ազգայնութիւնը, իբրեւ ոչ միայն ցեղագրական փաստ, այլեւ իբրեւ քաղաքական-իրաւաբանական միութիւն, իբրեւ մի ուրոյն մարմին, իր յատուկ, անձեռնմխելի իրաւունքներով - ազգայնութիւնը իբրեւ այդպիսի մի մարմին, ծնունդ առաւ եւ ձեւակերպուեց պատմական այն մեծ, աշխարհասասան փոթորկի միջոցին, որի անունն է **Ֆրանսիական Յեղափոխութիւն**»[13]:

2. Ազգային գոյության պարադոքսները. «անտարբերության պատուհասը» և «անիծված ճակատագիրը»

Վարանդյանի կարծիքով՝ հայոց կեցությունն ունի հակասական բնույթ, որովհետև հայ ժողովուրդը մի կողմից առաջադիմության առաջամարտիկ է, քաղաքակրթության ջահակիր, եվրոպական արժեքների կրող-տարածող, մշակութային միջնորդ (կուլտուր-տրեգեր), իսկ մյուս կողմից անհոգ ու անտարբեր է իր ֆիզիկական գոյության, հոգևոր արժեքների պահպանության ու կացութաձևերի վերափոխման հանդեպ, մի կողմից ձգտում է ազատության ու ինքնիշխանության, իսկ մյուս կողմից անմիաբան է և կրավորական, չի ուզում մասնակցել ազգային-ազատագրական պայքարին, մի կողմից ազ-

12 Նույն տեղում, էջ 26:
13 Նույն տեղում, էջ 33:

գային արժեքների պահպանման ջատագով է, ավանդապաշտ, իսկ մյուս կողմից, հափշտակված միջազգայնական գաղափարներով, հակված է ուծացման, մի կողմից նրա համար թանկ է հայրենիքի ամեն մի կտոր, իսկ մյուս կողմից նա լքում է հայրենիքն ու արտագաղթում և այլն: Այս հակասությունները ջլատում են ազգի ուժերը և դանդաղեցնում ազգային առաջընթացը: Մինչդեռ Ֆրանսիական հեղափոխությունից հետո բոլոր ազգերն արթնանում են քնից, ձգտում պահպանելու «իրենց ազգայնական ուրոյն կերպարանքը», ինչը միանգամայն ներդաշնակվում է առաջադիմության պահանջների հետ. «Մենք եւս վաղուց քաղաքակրթութեան աւազանն ենք մտել: Մենք պարծենում ենք մեր «վերածնութեամբ», մեր **կուլտուր**ական ունակութիւններով: Մենք ճանաչուել ենք լուսաւոր աշխարհից, որպէս մի ինքնատիպ ու առաջադէմ ազգ, որ ունի կատարելու մի փայլուն **միսսիա** խաւար Արեւելքում: Մենք սիրով ընդունում ենք մեր վրայ այդ միսսիան: Բայց ահա հակասութիւն. մենք միաժամանակ ցոյց ենք տալիս մի խելագար անհոգութիւն՝ դեպի այն բոլոր գործօնները - լեզու, մամուլ, գրականութիւն եւ այլն - որոնք կոչուած են առաջնորդելու մեզ, իբրեւ ուրոյն, գիտակից ազգի, դէպի համամարդկային քաղաքակրթութեան իդէալներ»[14]: Վարանդյանը չի նկատում, որ այս հակասության իմացաբանական հիմքում այն սխալ կանխադրույթն է, որը հայերին վերագրում է Ասիայի համար «լուսատու ճրագ» լինելու միֆական առաքելությունը: Տվյալ պարագայում անհեթեթն այն է, որ նման առաքելության նպատակն էր քաղաքակրթել այն ցեղերին ու ազգերին, որոնք դարերի ընթացքում ճնշել, կողոպտել, ստրկացրել ու ստորացրել էին հայությանը և շարունակում էին դա անել ավելի բարբարոսական ու անմարդկային ձևերով: **Գտնվելով Արևելքի ու Արևմուտքի, Հյուսիսի ու Հարավի սահմանագծում՝ տարբեր քաղաքակրթությունների ու մշակույթների խաչմերուկում՝ հայերի առաքելությունը (խոսքն ազգային քաղաքականու-թյան և ոչ թե անհատական գործունեության մասին է) ոչ թե իրենց քաղաքակրթական կարողականությունները լեռներում, անապատներում ու տափաստաններում փոշիացնելն է, մի քաղաքակրթության նվաճումները մյուսին փոխանցելը, այլ նախ և առաջ թե՛ մեկով և թե՛ մյուսով սեփականը հարստացնելը, սեփական քաղաքակրթության ու մշակութակերպի ինքնատիպությունը պահպանելն ու ժամանակների ոգուն համահունչ արդիականացնելը**[15]: Վարանդյանի համոզմամբ՝ այս հակասությունը բխում է նաև հայոց ինքնութենական թերիներից. «Մեր ազգային էութիւնը իր հրապուրիչ կողմերի հետ՝ ունի իր խիտ, իր շատ խիտ **ստուերները**… Ստուերներ՝ նոյնիսկ ազգայնութեան ամենատարրական պա-

14 Նույն տեղում, էջ 16:
15 Այդ մասին տե՛ս **Զաքարյան Ս. Ա.**, Հայոց առաքելության առեղծվածը, «Բանբեր Երևանի համալսարանի». Փիլիսոփայություն և հոգեբանություն, 2019, N 1, էջ 3-17:

հանջների տեսակէտից»[16]: Վարանդյանը թվարկում է հետևյալ ստվերոտ գծերը՝ **սեփական գոյության նկատմամբ անտարբերությունը, անտեսական գոյակերպը, սեփական պատմությունը կերտելու պատասխանատվության բացակայությունը՝ կրավորականությունը, անմիաբանությունը, ուծացման հակվածությունը, «գովազդային» հայրենասիրությունը, ազգային սնապարծությունը և իհարկե ազգայնության ու միջազգայնության գաղափարների առավելությունները համատեղելու անկարողությունը** և այլն:

Անտարբերությունն ազգային արժեքների նկատմամբ կամ անվերապահ հիացմունքը վերազգային արժեքներով մեզանում նախ և առաջ պայմանավորված են պատմականորեն ձևավորված ազգային հոգեկերտվածքային առանձնահատկություններով: Առհասարակ ինչպե՞ս է հայությունը վերաբերվում սեփական կեցությանը, ինչպե՞ս է կազմակերպում իր կենսագործունեությունը, ինչպե՞ս է ապահովում իր ֆիզիկական ու հոգևոր անվտանգությունը: Ազգի ինքնությանը նախորդում է **գոյությունը**, հետևաբար գոյության նկատմամբ վերաբերմունքից կարելի է եզրակացնել, թե տվյալ ազգը ի՞նչ գնահատական ու տեսական ունի սեփական ճակատագրի վերաբերյալ: Մտորելով ինքնապահպանության ու ֆիզիկական գոյության հանդեպ հայերի վերաբերմունքի մասին՝ Վարանդյանն իրավացիորեն գրում է, որ հայությունը, ըստ էության, չի մտածել իր հավաքական ֆիզիկական գոյության ապահովման մասին: Այս իմաստով հայոց հավաքական հիմնական արատն ինքնապահպանության բնազդի թուլությունն է. «**Գուցէ ոչ մի ազգ այնքան անտարբեր չէ դէպի իր ֆիզիքական գոյութեան հարցը, ինչպէս հայ ազգը** (ընդգծումը մերն է - Ս. Զ.)»[17]:

Վարանդյանը հարց է տալիս՝ ինչ արժեք ունեն մեր բոլոր մշակութային մտահոգությունները, ժողովրդական/հասարակական առաջադիմության ու բարգավաճման վերաբերյալ մեր ծրագրերը, ինչ արժեք ունեն մեր քաղաքական ու սոցիալական դեղատոմսերը, եթե ապահովված չէ ազգի ֆիզիկական գոյությունը: Ուզու՞մ ենք ապրել իբրև ազգություն, թե՞ ոչ. եթե այո՛, ապա պետք է ազգովի անենք այն ամենը, ինչ անհրաժեշտ է գոյատևելու համար. «Մեր **բացառիկ կացութեան** հանդէպ՝ մենք ոչ միայն չենք ձեռնարկում **բացառիկ միջոցների**, այլ նոյնիսկ չենք կատարում անհրաժեշտագոյն minimum-ը (նւազագոյն չափը) մեր հաւաքական պարտաւորութիւնների: Ազգային պահպանութեան խնդիր է դրուած նախ և առաջ հրապարակի վրայ և մենք պէտք է ձգտենք - ըստ առաջնոյն համախմբելով բոլոր առողջ ու կորովի տարրերը այդ ցաւատանջ մտահոգութեան շուրջը - մշակել բանաւոր և առնական **ազգային քաղաքականութիւն**»[18]:

---

16 **Վարանդյան Մ.**, Վերածնւող հայրենիքը եւ մեր դերը, էջ 148:
17 Նույն տեղում, էջ 113:
18 Նույն տեղում, էջ 127-128:

Իսկապես, հայոց կեցության յուրահատկություններից մեկն այն է, որ, հայկական արմատներով ռուս մեծագույն փիլիսոփա **Պ. Ֆլորենսկիի** բնորոշմամբ, հայությունը «դժբախտություն է ունեցել բնակվելու համաշխարհային պատմության երկնաքարերի միջև», «գտնվել կրակագծում փոխհրաձգող խրամատների միջև» և այդ պատճառով «իր գոյության բազում հազարամյակների ընթացքում անընդմեջ ծեծվել ու մշտապես հալչել է»[19]: Իսկ մենք մշակե՞լ ենք այդպիսի իրավիճակներին համապատասխանող՝ գոյատևելու ու վերածնվելու ազգային հայեցակարգ՝ հարց է տալիս Վարանդյանն ու պատասխանում՝ ըստ էության, ո՛չ: «Չենք արել, ինչ որ **պէտք է**, արել ենք միշտ, ինչ որ **պէտք չէ**»[20]: Իսկ ինչպե՞ս ենք գոյատևել, ինչպե՞ս ենք դիմացել ճակատագրի դաժան հարվածներին, եթե չենք ունեցել ինքնապահպանության մշակված ռազմավարություն: Պարզապես արել ենք նվազագույնը. դիմացել ենք, բայց ամեն անգամ ունեցել ենք տարածքային ու մարդկային կորուստներ: Միասնանալու և ուժեղանալու փոխարեն ցաքուցրիվ ենք արել մեր ուժերը՝ դրանք ծառայեցնելով այլոց կենսական նպատակներին: Այլ խոսքով՝ չենք մտահոգվել մեր ֆիզիկական ու քաղաքական գոյությամբ, **որովհետև չենք ունեցել հզորանալու տեսական, տեսականորեն հիմնավորված նպատակ, ապրելու մարտավարական ու ռազմավարական ո՛չ «բաց», ո՛չ էլ առավել ևս «գաղտնի» ծրագրեր**: Հաճախ կա՛մ բավարարվել ենք միայն ուզելով՝ ցուցանելով զգացմունքներ ու թմբկահարելով սնապարծական կարգախոսներ, կա՛մ էլ արել ենք քայլեր, որոնք մեզ ավելի են հեռացրել մեր ուզածից և այն դարձրել առոչինչ: Չունենալով **անկախականի հոգեբանություն** ու պետականամետ մտածելակերպ և անհատական շահը գերադասելով հանրային-պետական շահից՝ հաճախ բավարարվել ենք ուրիշների իշխանության ներքո գոյատևողի և հարկատուի կարգավիճակով: Սակայն, Վարանդյանի կարծիքով, դժբախտությունը միայն այն չէ, որ ձեռք ենք բերել ստրկական հոգեբանություն, այլև այն, որ չենք ուզում վերափոխվել, չենք ուզում պատմությունից դասեր քաղել, այսինքն՝ իմաստավորել սեփական պատմական անցյալը, ուստի հայտնվում ենք միևնույն, հիմնականում՝ ողբերգական իրավիճակներում. ««**Այսօրը» մեզ մօտ չափազանց նմանում է «երեկին», մեր պատմութիւնը յաւիտենական վերսկսումն է: Սուր, ցաւառիթ դրւագները վերադառնում են պարբերաբար, յուսահատեցուցիչ միօրինականութեամբ… Եւ միշտ նոյն ուրոյն, բացառիկ գծերով, որ յատուկ են մեր բացառիկ ճակատագրին** (ընդգծումը մերն է - Ս. Զ.)»[21]: Մեկից ավելի գործոններ՝ պատմությունը, աշխարհագրությունը, ցեղային ու քաղաքակրթական պայմաններն են դարբնել այդ «զարհուրելի», սարդոստայն հիշեցնող ճա-

19 **Աթայան Է.**, Հոգի և ազատություն, «Հոդվածներ և թարգմանություններ», Եր., «Սարգիս Խաչենց» հրատ., 2005, էջ 21:
20 **Վարանդեան Մ.**, Վերածնւող հայրենիքը եւ մեր դերը, էջ 115:
21 Նույն տեղում, էջ 113-114:

կատագիրը: Որո՞նք են հայի այդպիսի «անիծյալ ճակատագրի» պատճառները՝ արտաքին գերբնական ու բնական ուժե՞րը, քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմանն՞երը, պատահական հանգամանքնե՞րը, թե՞ ինքը՝ ժողովուրդը: Վարանդյանի համար պատասխանը միանշանակ է՝ առավելապես ժողովուրդը, որովհետև մարդիկ ու ժողովուրդներն են կերտում պատմությունը, նրանք են իրենց ճակատագրի իսկական տերերը և ոչ թե արտաքին տարատեսակ ուժերը. «Ճակատագիրը չէ, որ հրամայում է մարդկանց ու ժողովուրդներին, - այլ մարդիկ ու ժողովուրդներն են, որ հրամայում են ճակատագրին և տալիս են նրանց իրենց ուզած ընթացքը: Անշուշտ, պարապ ֆրազասիրութեան համար չէ, երբ փիլիսոփաները տրամաբանում են, որ մարդիկ տէր են իրենց ճակատագրին և կարող են տալ նրան իրենց ցանկացած դրոշմը… Պէտք է միայն **իմանան**, պէտք է միայն **կամենան**»[22]:

Ժողովուրդների պատմության հզորագույն դարբինը նրանց իմաստությունն է, նրանց միահամուռ ու հավաքական կամեցողությունը: Այս առումով ո՛չ միջավայրի տարականոնությունները, ո՛չ բարոյականության ու կրոնի արժեքները չեն կարող լինել «նախախնամութեան թարգմաններ» և «յաւէտ ստրկացնելու մի ժողովրդի և տիրեցնելու այլ ժողովուրդների»[23]: Կան ուրիշ նախախնամություններ, որոնք բխում են ոչ թե գերբնական ուժերից, այլ մարդկային էությունից և հարաբերություններից:

«Ինքնապահպանական բնազդի թուլության» հետ անմիջականորեն կապված է հայոց հոգեկերտվածքային մյուս թերությունը՝ **կրավորականությունը**, որն ավելի ցայտուն դրսևորվեց հայ ազատամարտի օրերին: Վարանդյանը ոչ միայն կրկնում է արմատական լուսավորականության այն սխալ թեզը, թե հայության կրավորականությունը հետևանք է քրիստոնեական դաստիարակության, այլև ավելի խորքային եզրահանգում է անում՝ այն համարելով վաղնջական ժամանակներում ձևավորված՝ հային բնորոշ հոգեգիծ: Կրավորականությունն ու հնազանդությունը համարելով քրիստոնեությանը բնորոշ երևույթ՝ նա կարծում է, որ **հայը եղել է քրիստոնյա նախքան Քրիստոսը**. «**Կրաւորականութիւնը** եղել է հայութեան ճակատագրի էութիւնն իսկ, նրա տխուր հոգեբանութեան գաղտնիքը: Զարնել են մէկ երեսին - նա դարձրել է միւս երեսը: «Հայ-քրիստոնեա» արտայայտութիւնը սքանչելիօրէն բնորոշում է այդ հազւագիւտ պսիխոզը, այդ եզակի հոգեբանութիւնը… «Հայ-քրիստոնեա» - դա նրա ճշգրիտ որակումն է, նրա հարազատ ատրիբուտը: Գուցէ ոչ մի ժողովուրդ չի ապրել այնքան ներդաշնակ, այնքան համաձայն **քրիստոնէութեան** պատուիրաններին, ինչպէս հայը: Այդ-

22 Նույն տեղում, էջ 115:
23 Նույն տեղում, էջ 114:

պէս՝ պատմութեան, այդպէս՝ և նախապատմութեան մէջ… Հայը եղել է քրիստոնեայ նախ քան Քրիստոսի երևալը…»[24]:

Ակնհայտ է, որ կրոնի քննադատ Վարանդյանը նախ խիստ միակողմանիորեն է ներկայացնում քրիստոնեական բարոյականության էությունը՝ դրանում տեսնելով միայն հնազանդության ու կրավորականության քարոզչություն, այնուհետև, երբ ասում է, թե հայը եղել է քրիստոնյա նախքան Քրիստոսը, հակասում է ինքն իրեն: Քանզի պետք չէ ձեռքբերովի ազգային հոգեկերտվածքային թերիների առկայությունը պայմանավորել քրիստոնեական բարոյականության սկզբունքներով: Իրականում նախքան Քրիստոսը հայը եղել է տարածաշրջանի ամենամարտունակ ժողովուրդներից մեկը, որը կերտել է Տիգրան Մեծի կայսրությունը: Բացի դրանից, ի տարբերություն քրիստոնյա այլ ազգերի, որոնց նվաճողական նկրտումներին քրիստոնեական բարոյականությունը բնավ էլ չի խանգարել, այլ ընդհակառակը՝ օգնել է (Տիրոջ դազաղը փրկելու համար եվրոպական ազգերը կազմակերպել են Խաչակրաց արշավանքներ, ռուսները մշակել են մարդկության փրկությունն ավետող «Երրորդ Հռոմի» տեսությունը՝ նվաճելով աշխարհի մեկ վեցերորդ մասը և այլն), հայերը չեն կարողացել օգտվել այդ գաղափարախոսության առավելություններից, ավելի ստույգ՝ չեն կարողացել բարոյականությունը զատել քաղաքականությունից: Ուստի «Հայը եղել է քրիստոնյա նախքան Քրիստոսը» արտահայտությունը պետք է մեկնաբանել այն իմաստով, որ հնուց ի վեր հայն իրականությունն իմաստավորել ու մեկնաբանել է առավելապես բարոյական հասկացություններով, պատերազմել է իրեն ճնշողների դեմ՝ հյուսելով «բարոյական» հաղթանակների մասին դիցույթ, ինքնապաշտպանվել է՝ երբեք ուրիշների ունեցվածքի վրա աչք չունենալով: Հայը «անբարո ու անիրավ» աշխարհում առաջնորդվել է բարոյականության մարդասիրական սկզբունքներով, ինչի պատճառով հաճախ է տուժել, չի կարողացել ինչպես հարկն է ինքնակազմակերպվել ու իր կամքը թելադրել քոչվոր, վայրենի ու ավազակաբարո ցեղերին և ավելի հաճախ ընտրել է կրավորական դիմադրության ճանապարհը: Վարանդյանը գրում է՝ կրավորական դիմադրությունը, անշուշտ, պատկառելի մի ուժ է, որ հնարավորություն է տվել ազգին ապրելու, գոյատևելու, բայց այդ ուժը չի բարձրացնում, չի ազնվացնում ժողովուրդներին, ավելի հաճախ նետում է հոգեկան անէացման անդունդը: Եթե կրավորականությունը նույնանում է անգործությանը, ապա դա այլևս չի կարելի բնորոշել որպես դիմադրություն: Նկատի ունենալով 19-րդ դարավերջին տեղի ունեցած արյունոտ իրադարձությունները՝ Վարանդյանն արձանագրում էր՝ տխուր ու անմխիթար էր հայկական դիմադրության պատկերը, խղճալի էր ժողովրդական զինավորումը կոտորածների ժամանակ, սոս-

24 Նույն տեղում, էջ 34:

կալի ու ամոթալի էին կրավորականության հետևանքները: Դիմադրությունը խմբային, անհատական էր, մինչդեռ կարող էր լինել զանգվածային: Մեծաքանակ ազգաբնակչությունից զինված էին ընդամենը մի խումբ կտրիճներ: Պատահական չէ, որ խուճապի պահին անզեն ու անարի տղամարդկանց մեծ մասը փախչում էր երկրից դեպի ապահով վայրեր: Այս կապակցությամբ Վարանդյանն անդրադառնում է հերոս-ժողովուրդ փոխհարաբերությանը՝ արձանագրելով հետևյալը. հայ հեղափոխության տարիներին ժողովրդի և հեղափոխականների միջև եղած անջրպետը խորանում է, որովհետև ժողովուրդը չի մասնակցում մի խումբ հեղափոխականների գործողություններին. «Յեղափոխական փոքրամասնութիւնը դարձեալ գրեթէ մեն-մենակ է, առանց **ժողովրդի լայն ու գործօն աջակցութեան**: Յեղափոխական և ժողովուրդ՝ ասես տարբեր, երբեմն նոյնիսկ հակամարտ կատէգորիաներ են: Որքան մէկը ըմբոստ, շարժուն ու նախաձեռնող, նոյնքան միւսը՝ անշարժ, կրաւորական և համակերպող: Այդ չարաբախտ հակօրինութիւնը (antinomie) մեր պատմական վերջին շրջանի ամենացայտուն, ամենաաղէտաբեր գծերից մինն է: ….ժողովուրդը իր խոշոր մեծամասնութեամբ, իր զանգւածային ընդհանրութեամբ եղել է միշտ և այսօր էլ շարունակում է լինել մի իներտ, ճակատագրապաշտ անշարժութիւն, գերի ֆատումին, ապաւինած Նախախնամութեան, աւետարանին ու բոլոր աստուածներին, որոնցից երբէք չը լսեց նա մարդկային արժանապատուութեան փրկարար խօսք, այլ միշտ միայն հնազանդութեան և նախրային համակերպութեան պատուիրաններ»[25]: Հեղափոխականներն ուշացումով հասկացան, որ հայ ժողովուրդը դեռ պատրաստ չէ զոհաբերության, որ դեռ անկարող է հրաժարվելու ստրկական շղթաներից, որ «խաղաղասեր» հայ ժողովուրդն այնքան էլ կողմնակից չէ արյունոտ ազատամարտին, և ամենակարևորը՝ «օտար լծերի ազդեցությունը ավելի մեծ ավերածություններ է առաջացրել հայ հոգու մեջ»[26], քան կարելի է պատկերացնել, ուստի հնարավոր չէր կարճ ժամկետում վերափոխել դարերի ընթացքում ժողովրդի հոգեբանության մեջ արմատացած ինքնութենական թերիները:

3. Ազգայնության և միջազգայնության փոխլրացման գաղափարը

Հայ ժողովրդին ներհատուկ էին ոչ միայն կրավորական-սպասողական կեցվածքները, այլև սեփական ինքնությունից հրաժարվելու, ձուլվելու և հայրենիքը լքելու վտանգավոր գործելակերպը: Թեև ուծացման վտանգը դամոկլյան սրի նման մշտապես կախված է եղել հայ ազգի գլխին, այդուհանդերձ,

25 Նույն տեղում, էջ 119-120:
26 **Նժդեհ Գ.**, Երկեր երկու հատորով, հատ. 1, Եր., ՀՀ արխիվային գործի գործակալություն, 2002, էջ 334:

դրա դրսևորումներն ու հետևանքներն ավելի ցայտուն երևացին 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին: Վարանդյանի գնահատմամբ՝ 20-րդ դարասկզբին հայության մեջ ստեղծվել էր տագնապալից դրություն. «հայրենիքը հոշոտվում է ոչ միայն դրսից»՝ ասիական բռնակալների և ցարական գաղութարարների կողմից, այլև «ներսից», որը դրսևորվում է ազգային բոլոր գործոնների, ազգային ինքնության բոլոր բաղկացուցիչ տարրերի հանդեպ անտարբերության ձևով: Մի կողմից տեղի էր ունենում ոչ այնքան բռնի, որքան կամավոր միաձուլում, ավելի ստույգ՝ մահմեդականացում ու ռուսականացում, իսկ մյուս կողմից՝ ազգային արժեքների ուրացման և միջազգայնության գաղափարներով հափշտակում: Թուրքիայի արևմտյան նահանգներում ու Կիլիկիայում հայության գերակշիռ մասը լեզվով (իսկ լեզուն «ազգայնութեան ամենաթանկագին գանձն է»[27]) ու բարքերով գրեթե դարձել էր մահմեդական: Դա կամավոր ազգասպանություն էր, մի արատ, օտարամոլության դրսևորում, որ բնորոշ էր նաև արևելահայության ռուսականացվող հատվածին:

Վարանդյանը գրում է, որ ծայրահեղ աշխարհաքաղաքացիական մի հակակրելի ձգտում էր բուն դրել հայկական գիտակցության մեջ, որը տանում էր դեպի այլասերում ու ապազգայնացում: Դա տարածվում էր բոլոր խավերի մեջ, անգամ հայ գաղափարական երիտասարդությունը, որը կոչված էր պայքարելու այդ ազգակործան երևույթի դեմ, չէր կարողանում ճիշտ կողմնորոշվել ստեղծված իրավիճակում:

Ի դեպ, ազգային նկարագրի նկատմամբ նման վերաբերմունքի մասին ահազանգում էին ժամանակաշրջանի բազմաթիվ մտածողներ ու գործիչներ: Օրինակ՝ բանաստեղծ Վահան Տերյանը նույնպես ցավով նշում էր, որ հայ մտավորականությունն ապազգայնացած է, նրա համար հայ մշակույթը, որպես այդպիսին, գոյություն չունի, ավելին՝ նա անտեղյակ է այդ մշակույթին. «Նա ոչ միայն անտեղյակ է, այլ **կամք** չունի տեղյակ լինելու, ավելին կասեմ, **արհամարհում** է այդ ամենը»[28]: Հայ երիտասարդության մի մասը, թյուր ըմբռնելով սոցիալիզմի վարդապետությունը, ժխտողական դիրքորոշում ուներ ազգային արժեքների նկատմամբ[29]: Նրանց կարծիքով՝ ազգայինին առնչվող բոլոր արժեքները նախապաշարումներ են, որոնք խանգարում են հասարակական առաջընթացին: Օրինակ՝ մարքսիստ Ալ. Ռուբենին (Ալեքսանդր Ծատուրյան, 1881-1920) սկզբունքորեն դեմ էր ազգային-մշակութային ավտոնոմիայի տե-

27 **Վարանդեան Մ.**, Վերածնող հայրենիքը եւ մեր դերը, էջ 148:

28 **Տերյան Վ.**, Երկեր, Բանաստեղծություններ, գրականագիտ. հոդվածներ, նամակներ, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1989, էջ 341:

29 Աշխարհաքաղաքացիության ընկալման սկզբնական փուլում հային բնորոշ էր հափշտակվածությունը դրա վերացական գաղափարների նկատմամբ: Հայն այդ գաղափարների իրագործման մեջ էր տեսնում իր փրկության ու երջանկության բանալին: Սակայն այդ ռոմանտիկ հափշտակվածությունը դառնում էր փորձությունների, եթե չասենք ձախորդությունների սկիզբ, մանավանդ որ վերացական գաղափարներն ընկալվում էին տառացիորեն և ընդունվում անվերապահորեն: Ճիշտ է նկատված, որ «միայն հայն է աշխարհի երեսին բոլոր ազգերուն մէջ, որ ամէն «ութիւն», քրիստոնէութենէն մինչեւ ընկերվարութիւն, առեր է այնպէս բառացի ու տառացի կերպով, վերացական յափշտակութեամբ ուրանալով եւ մոռնալով ինքնապահպանութեան ամենատարրական բնազդն անգամ» (**Շահան Նաթալի**, Թուրքերը և Մենք: Հուշեր, Եր., «Շուշան» հրատ.,1992, էջ 130):

սությանը այն պատճառով, որ այն կրթությանը հաղորդում է ազգային բովանդակություն, սերունդներին դաստիարակում է ազգային ոգով, ինչը հակասում է մարքսիզմի գաղափարախոսությանը. «Ազգային կուլտուրական աւտոնոմիայի ստեղծած կրթութիւնը կարող է դառնալ այսպէս կոչւած ազգային ոգով կրթութիւն, իսկ մի կրթութիւն, որ կրում է ազգային ոգի, նա դադարում է իսկական կրթութիւն լինելուց»[30]:

Ազգայնության ու միջազգայնության սահմանների ճշգրտման պայմաններում թե՛ եվրոպական և թե՛ հայ տեսական միտքը սկսեց քննարկել կարևորագույն ու հնագույն մի հարց, թե ինչպես կարելի է հաշտեցնել, զուգադրել հայրենիքի սերը և սերը դեպի համայն մարդկությունը, **ազգայինն ու համամարդկայինը**: Ըստ Վարանդյանի՝ պատմության ընթացքում եղել են դրանք «հաշտեցնելու» բազմաթիվ փորձեր: Օրինակ՝ քրիստոնեությունը քարոզում էր սեր, եղբայրություն, սեր առ թշնամին, բայց այդպես էլ չվերացրեց սոցիալական անհավասարությունը: Ուստի Վարանդյանը եզրակացնում է, որ, չնայած մարդկությանը բարեփոխելու, ազգերին հաշտեցնելու բազում փորձերին, միևնույն է, աշխարհում շարունակում է գործել «ակն ընդ ական»-ի հինկտակարանային դաժան սկզբունքը:

Բայց, ի հակակշիռ ազգայնամոլական տեսությունների, սոցիալիզմի վարդապետությունն առաջադրեց հարցի իր լուծումը՝ հռչակելով բոլոր ազգերի հավասարության, եղբայրության ինտերնացիոնալիստական գաղափարը և հաշտեցնելով միջազգայնության ու ազգայնության գաղափարները: Թեև «Կոմունիստական մանիֆեստ»-ում ձևակերպված էին այնպիսի արտառոց դրույթներ, ինչպիսիք էին՝ «աշխատավորները չունեն հայրենիք», պրոլետարիատը նախ և առաջ պետք է ազգային կռիվ մղի ազգային բուրժուազիայի դեմ և, նվաճելով քաղաքական իշխանությունը, դառնա ազգ ու «տիեզերական կոմունիստական հայրենիքի» մաս և այլն, այդուհանդերձ, Վարանդյանի կարծիքով, քանի որ նման հարցադրումներն իրենց բնույթով մետաֆիզիկական էին և հիմնված չէին իրական կյանքի ճիշտ իմացության վրա, հետագայում սրբագրվեցին: Վարանդյանը «Կոմունիստական մանիֆեստ»-ում այդպիսի մտքերի առկայությունը բացատրում է ինչպես սոցիալիստական մտքի «խակությամբ», այնպես էլ իրականության ոչ ճիշտ գնահատմամբ. «Նեղ էր դասակարգի հասկացողութիւնը, նեղ էր եւ պրոլետարիատի պատմական կոչման ըմբռնումը: **Սոցիալիզմի** հիմնադիրներին թւում էր, թէ աշխատաւոր դասակարգը լիակատար ինքնաճանաչութեան հասնելու համար՝ պէտք է խորտակէր բոլոր աւանդական կապերը, որոնք շղթայում են նրան **ազգային** կեանքի հետ: Նրանց թւում էր, թէ **կապիտալիզմը** ճակատագրական ձգտումն ունի՝ միշտ աւելի եւ աւելի ստորացնելու բանուոր դասա-

30 **Ռուբենի Ալ.**, Երկու խօսք ազգային կուլտուրական աւտոնոմիայի մասին, «Նոր կեանք» երկշաբաթաթերթ, Բաքու, 1912, N 3-4, էջ 125:

կարգը, խլելու նրանցից գոյութեան բոլոր երաշխիքները, նրան դուրս շպրտելու նոյնիսկ հայրենիքի, ազգութեան սահմաններից»[31]:

Ի հակադրություն հայ բոլշևիկների ու ազգայնամոլների՝ Վարանդյանը կարծում էր, որ **լինել ինտերնացիոնալիստ չի նշանակում լինել ապազգային**. սոցիալիստը նախ և առաջ պետք է պաշտպանի սեփական ազգի շահերը՝ դրանք զուգակցելով ընդհանուրի շահերին: Հիմնվելով ազգայնության ու միջազգայնության համադրման սկզբունքի վրա՝ Վարանդյանը դատապարտում էր թե՛ ազգայնամոլությունը և թե՛ աշխարհաքաղաքացիությունը (կոսմոպոլիտիզմը): **Ազգայնամոլները սրբապղծում են ազգայնության դրոշը և գիտակցաբար կամ անգիտակցաբար ձգտում ստորացնելու իրենց հարազատ ժողովրդին, իսկ աշխարհաքաղաքացիները (կոսմոպոլիտները) եսամոլներ են, անպատասխանատու մարդիկ, ովքեր իրենց իրավունք են վերապահում չհետաքրքրվելու ոչ մի բանով, որը կարող էր պահանջել իրական զոհաբերություններ**:

Վարանդյանի կարծիքով՝ հայության առջև ծառացած խնդիրները լուծելու համար պետք է ոչ թե սեպ խրել ազգայնության ու միջազգայնության միջև, այլ ընդհակառակը՝ օգտվել այդ երկու վարդապետությունների առավելություններից: Նույն կերպ պետք է ոչ թե ուշադրությունը սևեռել հայության ներսում դասակարգային տարբերությունների ու հակասությունների կամ մեզանում գոյություն չունեցող «դասակարգային կռվի» վրա, այլ ընդհակառակը՝ բոլորի ուժերը համախմբել ընդհանուր ճակատով միասնական պայքարի համար: Վարանդյանի համոզմամբ՝ դասակարգային կռվի տեսությունը դեռևս կիրառելի չէ մեզ համար. «Ինչ է «դասակարգային կռիվների» դերը այն ահռելի տարտարոսի մէջ, ուր բացակայում է,- թէ «**բուրժուա**»յի եւ թէ «**պրոլետար**»ի համար,- նոյնիսկ ապրելու, աճելու իրաւունքը: Ո՞վ է այն աստիճան խզուել պարտքի եւ առողջ դատողութեան հետ, որ գնայ քարոզէ **սոցիալիստ**ական **թէորիա**ները՝ ջարդի յարատև կօշմարի տակ ապրող մշեցուն, վանեցուն… Կամ ի՞նչ է նոյն այդ «դասակարգային կռուի» ծաւալը կովկասեան Հայաստանում՝ համեմատած այն խոր, արիւնահոս վէրքերի հետ, որոնք բացուած են ազգային մարմնի վրայ…»[32]:

Վարանդյանը համոզված էր, որ արտաքին ուժերն անզոր են խորտակելու մեզ, եթե դրանց չմիանան «ներքին չարիքները»: Իսկ «ներքին չարիքներից» գլխավորը հայերի անմիաբանությունն ու անհամերաշխությունն է, որոնք գործնականորեն դրսևորվեցին ազգային-ազատագրական պայքարի տարիներին, երբ ոչ միայն հայության տարբեր խավերը, այլև հայ հեղափոխական ուժերը չկարողացան միավորվել և հանդես գալ միասնական ճակատով, ավելին՝ սկսեցին պայքարել իրար դեմ՝ «թունավորելով հեղափոխական մթնոլորտը»: Վարանդյանի կարծիքով՝ դրա «մեծագոյն մեղապարտը, պա-

31 **Վարանդեան Մ.,** Հայրենիքի գաղափարը, էջ 45-46:
32 Նույն տեղում, էջ 101-102:

տասխանատուն՝ մեր մահաբոյր անցեալն է»[33], քանի որ դարերի ստրկությունն իր կնիքն է դրել ազգի, այդ թվում՝ ազգային հեղափոխության բարոյականության վրա: Իսկ դարավոր անմիաբանության և անիշխանության, անհատամոլության սառույցը կարող է փշրել մարդկային հոգիները ջերմացնող ու կենարար հոսանքը մաքրագործող հեղափոխական աշխատանքը[34]:

4. Ինքնության կերպափոխության պահանջը

Վարանդյանն ուշադրություն է դարձնում հայոց նկարագրի ևս մի թերության վրա, որն անմիջականորեն առնչվում է ազգայնության ու միջազգայնության, ազգայինի ու համամարդկայինի հարաբերակցությանը և այլ ազգերի նկատմամբ հայերի վերաբերմունքին: Վերջին թերությունն առհասարակ դրսևորվեց հայոց քաղաքական զարթոնքի ընթացքում և հատկապես երիտթուրքական հեղաշրջումից հետո: Նրա կարծիքով՝ հայ գործուն երիտասարդությունը, տոգորված լինելով գործելու անզուսպ ծարավով, մեղանչում է մի քանի ծայրահեղություններով, որոնք պակասավոր դաստիարակության ու սեփական ուժերի գերագնահատման հետևանք են ու միաժամանակ բնական հակազդեցություն այլազգիների (իշխող ազգերի) ճնշումներին ու վիրավորանքներին: Այդ ծայրահեղություններից են **կեղծ հայրենասիրությունն** ու **ազգայնամոլությունը**, որոնք բոլոր՝ քաղաքական, սոցիալական, բարոյական և գեղագիտական առումներով, հատկապես՝ տակտի ու ազգամիջյան համերաշխության տեսանկյունից, միանգամայն վնասակար են ու դատապարտելի: Թեև նման «ամբարիշտ ու ցուցամոլ շովինիզմով» վարակված էին ոչ միայն հայ երիտասարդները, սակայն նրանք լուրջ պատճառներ ունեին լինելու ավելի հավասարակշիռ, զուսպ ու համեստ: Հայերն այնքան լավատես էին երիտթուրքական հեղաշրջման կարգախոսների նկատմամբ, որ կարծում էին, թե այլևս վերացել են ազգային խտրականության դրսևորումները, որ ինչպես իրենք, այնպես էլ ազգային մյուս փոքրամասնություններն արդեն բոլոր առումներով հավասար են թուրքերի հետ, որ իրենք նույնպես «օսմանյան հայրենիքի» տերերն են և ազատորեն կարող են հրապարակավ ի ցույց դնել իրենց ազգային խորհրդանիշներն ու արժեքները: Վարանդյանը գրում է, որ, ազատության համը զգալով, նրանք սկսեցին շեփորել ու թմբկահարել իրենց մանկական «հայրենասիրությունը», հրապարակ նետեցին հայոց թագավորների՝ Արամի, Տիգրանի, Տրդատի և այլոց հերոսական պատմությունները, սկսեցին վերևից նայել «վայրենի» ազգերին[35]: Եվ դա անում էին մի միջավայրում, որն առհասարակ լցված էր թույնով ու ատելությամբ, մի միջավայրում, որում թուրքերը

33 Նույն տեղում, էջ 65:
34 Տե՛ս **Վարանդեան Մ.**, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., Երևանի համալս. հրատ.,1992, էջ 84:
35 Տե՛ս **Վարանդեան Մ.**, Վերածնող հայրենիքը եւ մեր դերը, էջ 146:

մի կերպ էին հանդուրժում հայերի ներկայությունը: Օրինակ, արտասահմանյան որոշ թերթերի տվյալներով, Ադանայի հայկական կոտորածներից առաջ հայերի նման պահվածքը գրգռիչ դեր խաղաց կոտորածները սկսելու համար: Վարանդյանի համոզմամբ՝ նման ցուցադրական պահվածքը ոչ թե հայրենասիրության, այլ հայրենամոլության ու կեղծ ազգասիրության դրսևորում է, որը ստորացնում է մարդկային արժանապատվությունը, ծնում արհամարհանք ու ատելություն դեպի մյուս ազգերը: Այդ «հիվանդությունը» արտահայտվում էր «աքլորային տրամադրությունների» ու «ազգայնական ունայնամիտ ինքնահաւանութեան մէջ»[36]: Դիպուկ է նկատել Վարանդյանը՝ երբեմն շրջապատի ու արտասահմանի վրա թողնում ենք այն անհեթեթ տպավորությունը, թե հայկական հայրենասիրությունն ըմբոստ է, անհաշտորեն հարձակողական ու անջատական[37]: Այդ կեղծ հայրենասերների մեջ քիչ չէին նաև անուղղելի ամբարտավանները, որոնք «**սիրում են պարծենալ ազգային «առաջնութեան» ու «բարձրութեան» պատրանքներով և հրապարակօրէն եւ դէմօնստրատիվ ցուցադրում են իրենց արհամարհոտ գերազանցությունը հանդէպ «ստորին, վայրենաբարոյ ցեղերի»** (ընդգծումը մերն է - Ս. Զ.) » [38]: Օրինակ՝ պոլսահայ մի լրագրող թիֆլիսահայ թերթում ներկայանալով որպես թունդ «հայրենասեր» ու թրքատյաց, իրեն թույլ էր տալիս բացահայտորեն գրել, թե «թուրքը ուժ ու խելք չունի», «թուրքը բաշիբոզուկ ցեղ է», «որտեղ թուրքը, այնտեղ ավեր ու կործանում» և այլն: Նման պահվածքն ու վերաբերմունքը, որը թույլ չէր տալիս իրական պատկերացում ունենալ թուրք ազգի առավելությունների ու թերությունների մասին, Վարանդյանը բնութագրում էր հետևյալ կերպ. «Անսահման խեղճութեան մէջ՝ անսահման ամբարտաւանութիւն: Մտաւոր կատարեալ բոբիկութեան հետ՝ սանձարձակ յաւակնոտութիւն ու գոռոզութիւն»[39]: Այդ վնասակար պատրանքների փոխարեն հայ երիտասարդության մեջ պետք է իշխի առողջ ազգային ինքնասիրությունը, որն ուզում է պաշտպանել ինքն իրեն՝ հարգելով այլոց իրավունքներն ու զգացմունքները:

Ըստ Վարանդյանի՝ սիրել, պաշտպանել հարազատ ազգայնությունը, լեզուն, հայրենի ստացվածքներն ու մշակութային ժառանգությունը յուրաքանչյուր կրթված մարդու հատկանիշն է: Բայց որքա՜ն շատ են այն աղմկոտ

36 Ինչպես ցույց է տալիս կյանքը, այս ազգային հիվանդությունը դժվար բուժվողներից է, և դրա դրսևորումները նկատելի են նաև մեր ժամանակներում: Օրինակ՝ բանաստեղծ Պարույր Սևակը, սնապարծությունը համարելով ազգային ինքնասպանության ձևերից մեկը, նշում է, որ սնամեջ ու հավակնոտ գլուխգովանները դատում են այսպես. «Մենք որ Պլատոն էինք թարգմանում՝ նրանք ապրում էին ծառերի վրա…», «Իսկ հապա մեր այսինչը, մեր այնինչը, մեր էսը, մեր էնը…»: «Սառելին այն է,- գրում է բանաստեղծը,- որ այսպես դատողների մեծամասնությունը բնավ էլ չգիտի ոչ մեր Այսինչը, ոչ Այնինչը, ոչ էսը, ոչ էնը. նա պարզապես կրկնում է անուններ: Իսկ ամոթալին այն է, որ նա ոչ միայն չգիտի, այլ նաև եթե նրան ասես, թե մեր մոտավոր ու հեռավոր հարևաններն էլ ունեցել են այդ ամենը կամ այդ ամենից շատ ավելին, չի հավատա կամ քեզ կհամարի, ինչպես հիմա ասում են՝ «շուռ տված հայ»: Հայրենասիրության այս տեսակը մի փափուկ բարձ է, որ լցված է ոչ թե աղվամազով, այլ քնաբեր հաշիշով, և դա այն ժամանակ, երբ մեր շուրջ գնում է մրցություն, եթե ոչ պայքար» (**Սնակ Պ. Ռ.**, Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն, «Երկերի ժողովածու երեք հատորով», հատ. 3, Եր., «Սովետ. գրող» հրատ., 1983, էջ 52-53):

37 Տե՛ս **Վարանդեան Մ.**, Վերածնող հայրենիքը եւ մեր դերը, էջ 147:

38 Նույն տեղում, էջ 140:

39 Նույն տեղում, էջ 145-146:

ազգասերները, որոնք ծանոթություն անգամ չունեն դրանց վերաբերյալ. ազգն ու հայրենիքը նրանց համար լոկ հողմարգելներ են, դիմակներ: Իսկ հայերն ունեն համեստ լինելու բազմաթիվ պատճառներ: Ուստի Վարանդյանն առաջարկում էր միասին պարզել, թե ում համեմատությամբ ենք «բարձր»: Այո՛, գուցե դրկից «վայրենի» ցեղերի համեմատ բարձր ենք, ինչը «դեռ հիմք չի տալիս պարծենալու, ազգային հպարտութեան թմբուկ զարնելու»[40], բայց եվրոպականի համեմատ մենք դեռ ապրում ենք խոր միջնադարում. թուրքահայ, պարսկահայ ու ռուսահայ գավառներում ապրող հայության բարքերը, սովորույթներն ու մտածումները դեռ միջնադարի շրջանակներում են: Ուրեմն պետք է ոչ թե որոշենք, թե ով ումից է առավել ու բարձր, այլ մտածենք մեր ինքնությունը կերպափոխելու մասին՝ դարձնելով այն ժամանակի պահանջներին համապատասխան: Ճշմարիտ հայրենասերի համար Հայրենիքը վերացական գաղափար չէ. հայոց հողն է, նախնիների գերեզմանները, լեզուն, սրբությունները: Հայրենիքը մի ուրույն պատմություն է, հիշողությունների մի ցանց՝ տեղ-տեղ պայծառ ու տեղ-տեղ տխուր և ողբերգական պատկերներով, որոնց կողքով ճշմարիտ հայրենասերները չեն կարող անտարբեր անցնել: Ճշմարիտ հայրենասերը ձգտում է ազնվացնելու իր հարազատ ժողովրդին, բարձրացնելու նրան քաղաքակրթության սանդուղքի գագաթները, մտահոգվում է ընդհանուր հայրենիքի ու մարդկության ապագայով՝ «առանց ոտնահարելու և արհամարհելու ուրիշ ազգերի նոյնքան արդար ու օրինաւոր ձգտումները»[41]:

Հայրենասերը պետք է ձգտի իր ժողովրդին ուղղորդելու դեպի համաշխարհային քաղաքակրթության մեծ ճանապարհը, նրան տալու առաջխաղացման ու զարգացման բոլոր գործիքները, ապահովելու նրա քաղաքական ու սոցիալական իրավունքները, զարգացնելու նրա ուրույն անհատականությունը, լեզուն, մշակույթը, ընդ որում՝ ղեկավարվելով ազգային ու միջազգային «ավետարանի» հրահանգներով՝ թելադրված ռամկավարական տիրական պահանջներից[42]: Ըստ Վարանդյանի՝ ազգային բոլոր առանձնահատկություններն ինքնին դեռևս դրական արժեքներ չեն. դրանք դառնում են այդպիսին, երբ նպաստում են ազգի «աստիճանական **վերելքին**, աստիճանական առաջխաղացութեան՝ դէպի ժամանակակից ռամկավարութեան Իդէալը, դէպի ազատութեան և ընդհանուր, **զանգւածային բարօրութեան** յաղթանակը»[43]:

Վերածնվող հայրենիքում պետք է ստեղծել նոր սերունդ, որը վերակազմել է իր մտքերն ու հոգին, սրբագրել է իր ինքնութենական թերիները, յուրաց-

40 Նույն տեղում, էջ 148:
41 Նույն տեղում, էջ 150:
42 Տե՛ս նույն տեղում, էջ 149:
43 Նույն տեղում, էջ 402:

ռել է կրթության առաջադեմ մեթոդները, տոգորվել է ճշմարիտ հայրենասիրության, արևմտյան առաջադեմ գաղափարներով ու ռամկավարական ազատաշունչ հավատամքով: **Բարգավաճ հայրենիք**՝ ահա սա պետք է լինի պատասխանը դարերի հայահալած, մռայլ մղձավանջին, մեր հզորագույն հակահարվածն արտաքին ու ներքին մութ ուժերին:

Ճշմարիտ հայրենասերը պետք է տեր կանգնի իր երկրին, ժողովրդին և նրա մշակութային արժեքներին: Հետևաբար ազգի անվտանգությանն սպառնացող մարտահրավերներին դիմակայելու համար հարկավոր է կռվել բոլոր ճակատներով, հարկավոր է ամենուր և ամեն տեղ տեր կանգնել սեփական իրավունքներին, բոլոր միջոցներով պաշտպանել սեփական ինքնուրույնությունը. «Կռի՛ւ **բոլոր միջոցներով**՝ սկսած խաղաղ, կուլտուրական պայքարից: Ազգայնութիւնը ոչնչացնում են - պէտք է հակազդել: Խլում են հայ տարրից նրա բոլոր իրաւունքները եւ ձգտում են ի սպառ այլասերել նրան, անբարոյականացնել: Բոլոր զէնքերով պէտք է մաքառել **ռուսացման դէմ**: Բոլոր զէնքերով պէտք է պաշտպանել եւ կատարելագործել առաջադիմութեան այն հրաշալի գործիքը, որ կոչւում է ազգային-հասարակական **ինքնագիտակցութիւն**»[44]: Վարանդյանի կարծիքով՝ այդպիսի պայքարի օրինակ է տալիս լեհ ժողովուրդը, որի բոլոր խավերը, գաղափարական բոլոր հոսանքները համակարգված կռիվ հայտարարեցին ռուսացման վտանգին: Խաղաղ պայքարը լրացուցիչն է զինված պայքարի: Այսպիսի պայմաններում քաղաքական, նյութական Հայրենիք կառուցելու համար հարկավոր է ներքին, հոգևոր Հայրենիք կառուցել:

Այս հարցում Վարանդյանի մոտեցմանը նման գաղափար ուներ Վահան Տերյանը, ով «Հոգևոր Հայաստան» ասելով հասկանում էր ազգի ներքին ուժերի գաղափարական համախմբման միջոցով «հայության հավաքում» կամ «հայության կազմակերպում». «Ազգը միայն արտաքին ուժերի զորությամբ, իրերի արհեստական դասավորությամբ չի ստեղծվում, այլ իր անդամների ներքին մտավոր-հոգեկան կապով: Պետք է բացի արտաքին հնարավորությունից լինի և ներքին մի զորություն, մի հոգևոր մղում, որ մարդկանց համախմբումը ազգ է դարձնում: …Ես ոչ մի արժեք չեմ տալիս այն ազգության, որ արտաքին սահմաններով է պահպանում իր ինքնությունը, և որ գլխավորն է մի ինքնություն, որ կարիք էլ չկա պահպանելու: Ահա թե ինչու ես կարծում եմ, որ բացի արտաքին արգելքները հաղթահարելուց, ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ **անդադար** պիտի ստեղծե այն արժեքները, որոնք նրա **ինքնության** առհավատչյաներ են»[45]:

Բայց, ի տարբերություն Տերյանի, Վարանդյանը քարոզում էր «նյութական» և «հոգևոր» Հայաստանի միասնության գաղափարը, որովհետև անհա-

44 **Վարանդեան Մ.**, Հայրենիքի գաղափարը, էջ 98:
45 **Տերյան Վ.**, նշվ. աշխ., էջ 345-346:

վանական էր համարում ազգի հետագա գոյությունը՝ առանց տարածքի և «նյութական» հայրենիքի: Ուստի պատահական չէ, որ նա պաշտպանում էր ազգի ոչ թե ազգային-մշակութային ինքնավարության, այլ «տերիտորիալ ինքնօրինության» գաղափարը: Վարանդյանի կարծիքով՝ ազգամիջյան «հավիտենական կնճիռների» լուծման բանալին է ունենալ այնպիսի պետություն և իրավակարգ, որտեղ ազգերը պետական ամբողջության մեջ կլինեն ազատ ու ինքնիշխան. «Ազգը ոչինչ է կամ գրեթէ ոչինչ, երբ նա չի օժտուած **պետականութեան**, քաղաքական ինքնիշխանութեան ստորոգելիներով»[46]:

Սակայն իրավիճակն այնպիսին էր, որ պատմական տարբեր հանգամանքների բերումով փոքր ազգերը ենթարկված էին մեծաթիվ բնակչությամբ ազգերին ու պետություններին: Մի կողմից նրանք չէին հաշտվում իրենց իրավազուրկ վիճակի հետ, մյուս կողմից իշխող ազգերը չէին էլ ուզում նրանց ճանաչել որպես ազգ. լավագույն դեպքում ճանաչում էին որպես կրոնական համայնք կամ ազգաբնակչության որոշակի խումբ: Ուստի, Վարանդյանի կարծիքով, ապակենտրոնացումը և ֆեդերացիան ազգություններին կարող են տալ «լիակատար ինքնօրինութիւն ու ինքնավարութիւն (ավտոնոմիա), իր բոլոր անհրաժեշտ ստորոգելիներով, շաղկապված, հարկաւ, ընդհանուր, պետական օրգանիզմի պաշտօնավարութեան հետ»[47]:

Հիմնվելով ՀՅԴ 1907 թվականի ծրագրի դրույթների վրա՝ Վարանդյանը նշում է, որ «ազգային ինքնավարություն» և «անկախություն» ասելով իր կուսակցությունը չի հասկանում «անջատ հայկական թագավորության» ստեղծում, այլ ինքնավարություն դաշնակցային պետության մեջ: Ըստ նրա՝ ֆեդերացիան ազգային հարցի լուծման լավագույն ձևն է, որովհետև աստիճանաբար ավելի է մեծանում առանձին անհատների և ազգերի՝ ազատ ու ինքնիշխան ապրելու պահանջը, և այս իմաստով դա պատմական էվոլյուցիայի վախճանակետն է: Ֆեդերացիան իդեալ է, իսկ «ազգային վեճերով տառապող պետության» համար դրան հասնելու սպեղանին ազգային ինքնօրինությունն է, երբ պետությունով մեկ սփռված ազգությունը կազմում է իրավական ու օրգանական մի ամբողջություն իր ազգային կենտրոնական խորհուրդով, որի տնօրինության տակ են գտնվում ազգային-մշակութային կազմակերպությունները, դպրոցները, համալսարանները, թատրոնները, գրադարանները, բարեգործական ընկերությունները և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչ անհրաժեշտ է տվյալ ազգի առաջադիմության ու բարգավաճման համար: Սակայն դա չի նշանակում, թե առհասարակ բազմազգ պետություններում, մասնավորապես՝ Թուրքիայում ու Ռուսաստանում, հեշտությամբ, առանց անդուլ պայքարի կարող են հաստատվել ֆեդերատիվ հարաբերություններ: Բացի դրանից՝ չպետք է բացառել պետության բռնի միջամտությունները և ազգային ինքնօրինության դեմ ոտնձգությունները: Իշխող ազգը կոգ-

46 **Վարանդեան Մ.**, Վերածնուող հայրենիքը եւ մեր դերը, էջ 5:
47 Նույն տեղում, էջ 240:

տագործի պետական մեքենան՝ իրեն ձեռնտու ազգային քաղաքականություն վարելու համար: Իսկ պետության ոտնձգություններից պաշտպանվելու միակ ձևը ազգին պետական ստորոգելիներով օժտելն է: Դրա համար անհրաժեշտ է, որ ազգը մեծամասնություն կազմի իր հայրենիքում, ինչը չէինք տեսնում հատկապես Արևմտյան Հայաստանի որոշ վիլայեթներում, որոնք թուրքական պետությունն այնպես էր բաժանել, որ հայությունն իր բնաշխարհում ոչ մի տեղ մեծամասնություն չկազմի, իսկ առանց դրա հնարավոր չէ իրականացնել տերիտորիալ ինքնօրինություն[48]: Ուստի Վարանդյանը գրում է, որ թուրքական նոր սահմանադրական իրավակարգը, եթե իսկապես միջազգայնական է, պետք է ընդունի, որ նման սահմանագծումը «**քաղաքական մի ոճիր**»[49] է հայության նկատմամբ, և, ռամկավարական ուժերի հետ համագործակցելով, կատարի փոփոխություններ ըստ կարելույն ազգայնորեն: Իսկ այն շրջաններում, որտեղ հայությունը կկազմի փոքրամասնություն, պետությունը օրենքներով պետք է երաշխավորի նրա քաղաքացիական իրավունքները:

Ազգայնության և միջազգայնության մեծ տեսաբան Միքայել Վարանդյանը հավատում էր, որ թեկուզև հեռավոր ապագայում, սակայն կգա «ոսկե դարը», կհաղթանակի ժողովուրդների համերաշխության գաղափարը, նրանք կկազմեն մի իսկական ազատ դաշնակցություն, որում կպահպանվի յուրաքանչյուր ազգի ուրույն անհատականությունը, և ազգային ինքնության կրողը կլինի ազգայնության ու միջազգայնության, ազգայինի ու համամարդկայինի միասնությունը մարմնավորող ճշմարիտ հայրենասերը:

Եզրակացություններ

20-րդ դարասկզբի հայ հասարակագիտական միտքը, ազգին, պետության մեջ ազգերի կարգավիճակին և ազգերի փոխհարաբերությանն առնչվող հարցերը քննարկելով պատմության մեջ նրանց խաղացած տեղի ու դերի, պատմության շարժիչ ուժերի, ազգայնության ու միջազգայնության, ազգային ինքնության կառուցատարրերի փոխհարաբերության համատեքստում, առաջադրում էր դրանց լուծման մի քանի տարբերակներ: Ի տարբերություն այն տեսաբանների, ովքեր իրար էին հակադրում ազգայնությունն ու միջազգայնությունը՝ առավելություն տալով դրանցից որևէ մեկին, ՀՅ Դաշնակցության տեսաբանները, այդ թվում՝ Միքայել Վարանդյանը, գտնում էին, որ դրանք ոչ թե փոխբացառող, այլ ընդհակառակը՝ փոխպայմանավորող ու փոխլրացնող հասկացություններ են: Վարանդյանը ազգայնության ու միջազգայնության միասնությունը ներկայացնում էր հետևյալ կերպ. ազգությունը միջազգայնության հիմքն է, միջազգայնությունը կարող է գոյություն ունենալ միայն ազգությունների հիմքի վրա, հետևա-

48 Տե՛ս նույն տեղում, էջ 242:
49 Նույն տեղում, էջ 248-249:

բար նպաստել ազգության զարգացմանը, նշանակում է նպաստել միջազգայնության զարգացմանը: Քննադատելով ինչպես ազգայնամոլության և շովինիզմի բոլոր դրսևորումները, այնպես էլ ազգային ճնշումներն արդարացնող տեսությունները, Վարանդյանը պաշտպանում էր ազգերի իրավական ու քաղաքական հավասարության գաղափարը՝ հավատացած լինելով, որ ապագայում ստեղծվելիք ընդհանուր պետությունը կլինի ռամկավարական արժեքների վրա խարսխված և անհատական մշակութակերպը պահպանած ազգերի համադաշնություն:

Համաշխարհայնացման արդի գործընթացներում, երբ դարձյալ քննարկման առարկա են դարձել ազգայնության ու միջազգայնության, համընդհանուրի ու անհատականի հարաբերակցությանն աղերսվող հարցերը, խիստ ուսանելի են 20-րդ դարասկզբի հայ հասարակական մտքի հարցադրումները: Այսօր էլ մեզանում որոշ տեսաբաններ, անտեսելով անցյալի փորձը, այսինքն՝ չուսումնասիրելով անցյալում տեղի ունեցած բանավեճերի արդյունքները, չիմաստավորելով առաջադրված տեսակետները և հաշվի չառնելով կյանքում դրանց կիրարկման հետևանքները, իրար են հակադրում ազգայնությունն ու միջազգայնությունը, ազգայինն ու համամարդկայինը՝ շեղվելով մեր մեծերի համադրական աշխարհընկալումից: Ազգի ու ազգային ինքնության անվտանգության տեսանկյունից հատկապես անընդունելի են այն տեսությունները, որոնք ազգայինը ստորադասում են միջազգայնությանը, հետարդիական մտածողության միակողմանի ընկալմամբ ազգային իրողությունները համարում են հասարակական առաջընթացը խոչընդոտող հանգամանքներ: Այդ պատճառով ազգային ինքնությունն արդիականացնելու քողի տակ պահանջում են խմբագրել պատմական հիշողությունը, առանց «կարծրատիպերի» վերաիմաստավորել անցյալի պատմական իրադարձությունները, հրաժարվել ազգային ավանդույթներից ու արժեքներից, ապազգայնացնել հատկապես կրթության ու դաստիարակության բովանդակությունը և այլն: Մինչդեռ ազգերի գոյության պատմական փորձը ցույց է տալիս, որ համաշխարհայնացման գործընթացները գալիս-գնում են, իսկ կենսունակ ազգերը մնում են, ավելին՝ այդ ընթացքում ծաղկում ու բարգավաճում են հատկապես այն ազգերը, որոնք, խելամտորեն համադրելով ազգայնությունն ու միջազգայնությունը, կարողանում են միջազգայնության ընձեռած հնարավորություններն օգտագործել ազգայինը հարստացնելու ու հզորացնելու համար:

Սեյրան Ա. Զաքարյան - գիտական հետաքրքրությունների բնագավառները՝ փիլիսոփայության պատմություն, հայ փիլիսոփայության, մշակույթի և ինքնության պատմություն: Հեղինակ է բազմաթիվ գիտական հոդվածների և մենագրությունների, այդ թվում՝ «Մարդու հիմնահարցը XIII-XV դարերի հայ փիլիսոփայության մեջ», Եր., 1999, «Հայկական Վերածննդի հարցը» (մեթո-

դաբանական վերլուծություն), Եր., 2006, «Ունիվերսալիաների հիմնահարցը միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ», Եր., 2014, «Արիստոտելը և XIV դարի հայ փիլիսոփայությունը», Եր., 2017, «Տաթևի համալսարանի իմաստասերները», Եր., 2018, «Սուրբ Հովհան Օձնեցի իմաստասեր կաթողիկոսը», Եր., 2019:

Summary

THE GREAT THEORIST OF NATIONALISM AND INTERNATIONALISM

To the 150th birthday anniversary of Mikael Varandyan

Seyran A. Zakaryan
Doctor of Philosophical Sciences

Key words - Michael Varandyan, Armenian identity, paradoxes of national existence, nationalism, internationalism, national values, fate, passiveness, assimilation, false and true patriotism.

The prominent Armenian historian, political scientist of the 20th century, AR Federation (Dashnaktsutsyun) theorist-ideologist Michael Varandyan (1870-1934) considers issues of the Armenian identity both within the context of historical and cultural developments, current political events, as well as in the context of historical philosophy, social anthropology and historical psychology. Such an approach allowed him to view the three key questions about national identity in the context of past-present-future, and more precisely, make the past and the future more meaningful based on contemporary requirements. The questions in discussion are: Were we in the past? What are we in the present? And what will we be in the future? Varandyan is prone to the approach, according to which identity is not a set of perpetual and pre-created characteristics but a summary of continuously created, shaped and transformed identifications. Unlike the Christian paradigm of the Armenian identity, where the Church, the faith and the religion played the main role, Varandyan, following the Armenian enlighteners of the second half of the 19th century, favors the secular paradigm of identity, where the nation, the homeland and the secular values are of main importance (democracy, science, secular education, freedom of conscience, etc.).

First of all, Varandyan's negative attitude is conditioned by his radical secular views (according to him, religion has "sanctified the slavery of the mind and heart" at

Դիտակ-մատենագիտական հանդես, 2020, թիվ 1 (69), հատոր ԺԴ

all times and in all places, and the "clerical class" has in its turn exploited the human soul), dominated by the cult of science and practice and the criticism of religion. Secondly, he negatively assesses the role of the Christian religion, the church and the clergy in national life.

According to Varandyan, the Armenian existence is paradoxical/contradictory because on one side the Armenian nation is a pioneer of progress, who carries and spreads the European culture and values, and on the other side it is careless and indefinite to its physical and spiritual existence and its forms. It strives for freedom and sovereignty on one side and on the other side it is disunited and passive when it comes to the national liberation fight. On the one hand, it advocates the preservation of national values, and on the other hand, it is absorbed by internationalist (transnational) ideas and is subject to assimilation and so on. Varandyan sees the solution of these contradictions in "spiritual revolution" which will change the forms of attitude towards the national existence and its values and will purify the identity defects. The "hero" of that revolution must be a true patriot, who is a carrier of both national and universal principles, is armed with national values and is ready to fight for his and other nations' freedom and sovereignty.

Резюме

ВЕЛИКИЙ ТЕОРЕТИК НАЦИОНАЛЬНОГО И ИНТЕРНАЦИОНАЛЬНОГО

К 150-летию со дня рождения Микаэла Варандяна

Сейран А. Закарян
Доктор филос. наук

Ключевые слова - Микаэл Варандян, армянская идентичность, парадоксы национального бытия, национальное, интернационализм, национальные ценности, судьба, пассивность, отчуждение, ложный и истинный патриотизм.

Видный армянский историк, политолог 20-го века, идеолог-теоретик АРФ Дашнакцутюн Микаэл Варандян (1870-1934) рассматривал вопросы, касающиеся армянской идентичности, как в контексте закономерностей развития истории, культуры и текущих политических событий, так и в контексте истории философии, социальной антропологии и исторический психологии. Такой подход дал ему возможность рассмотреть три главных вопроса, касающихся армянской

идентичности (кем мы были, кто мы сейчас и кем будем) в темпоральном контексте «прошлое-настоящее-будущее», а более конкретно, осмыслить прошлое и будущее, исходя из требований настоящего. Варандян защищал теорию, согласно которой, идентичность - не данная навсегда целостность первозданных свойств и качеств, а совокупность возникающих, формирующихся и подвергающихся изменениям идентификаций. В отличие от религиозной парадигмы армянской идентичности, в которой центральное место было отведено церкви, вере и религии, Варандян, следуя просветителям второй половины XIX века, отдает предпочтение светской парадигме идентичности, в которой главными являются нация, родина и светские ценности (демократия, наука, светское образование, свобода совести и т. д.).

Негативное отношение Варандяна к церкви и «клерикальному классу» обусловлено в первую очередь его просветительским мировоззрением (согласно ему, религия во все времена и везде «освящала рабство мысли и сердца», а «клерикальный класс» эксплуатировал человеческие души), в котором доминировали поклонение науке и делу, критика религии. Во-вторых, негативной оценкой роли христианской религии, церкви и духовенства. По мнению Варандяна, армянское бытие имеет парадоксальную/противоречивую природу, так как армянский народ, с одной стороны - передовик прогресса, носитель и распространитель европейских ценностей, с другой – беззаботный и равнодушный к своему физическому существованию и изменению жизненного уклада. Он, с одной стороны, стремиться к свободе и суверенитету, с другой – разобщен и пассивен в национально-освободительной борьбе; с одной стороны – поборник сохранения национальных ценностей, с другой – увлеченный международными (наднациональными) идеями, склонный к отчуждению. По мнению Варандяна, для решения этих противоречий необходимо с помощью «духовной революции» изменить формы отношения к национальному бытию и ценностям, скорректировать недостатки. «Героем» этой «духовной революции» должен быть истинный патриот, вооруженный демократическими ценностями, сочетающий в себе национальное и общечеловеческое и борющийся за свободу и независимость как своей, так и других наций.

REFERENCES

1. **At‘ayan Ē.,** Hogi yev azatut‘yun, Hodvatsner yev t‘argmanut‘yunner, Yer., «Sargis Khach‘ents‘» hrat., 2005 **(In Armenian)**.
2. **Khazhak G.,** Inch‘ ē azgut‘iwn? K. Polis, «Artsiv zhoghovrdakan gravacharanots‘i» hrat., 1912 **(In Armenian)**.

3. **Khoudinyan G.,** Mikʻayel Varandyan (Hovhannisyan), «Haykakan hartsʻ» hanragitaran, Yer., «Haykakan hanragit.» hrat., 1996 **(In Armenian)**.
4. **Nzhdeh G.,** Yerker yerku hatorov, hat. 1, Yer., HH arkhivayin gortsi gortsakalutʻyun, 2002 **(In Armenian)**.
5. **Ṛubeni Al.,** Yerku khōskʻ azgayin kulturakan awtonomiayi masin, «Nor keankʻ», 1912, N 3-4 **(In Armenian)**.
6. **Sevak P. Ṛ.,** Azgayin snapartsutʻyun yev azgayin arzhanapatvutʻyun, Yerkeri zhoghovatsu yerekʻ hatorov, hat. 3, Yer., «Sovet. grogh» hrat., 1983 **(In Armenian).**
7. **Shahan Natali,** Tʻurkʻerě yev menkʻ: Husher, Yer., «Shushan» hrat., 1992 **(In Armenian)**.
8. **Shahumyan St.,** Azgayin hartsʻě yev sotsʻial-demokratian, Yerkeri liakatar zhoghovatsu hing hatorov, hat. 1, Yer., «Hayastan» hrat., 1975 **(In Armenian)**.
9. **Shahumyan St.,** Azgayin-kulturakan avtonomiayi masin, Yerkeri liakatar zhoghovatsu hing hatorov, hat. 2, Yer., «Hayastan» hrat., 1976 **(In Armenian)**.
10. **Teryan V.,** Yerker, Banasteghtsutʻyunner, grakanagit. hodvatsner, namakner, Yer., «Sovet. grogh» hrat., 1989 **(In Armenian)**.
11. **Tʻiwtʻiwnchean Kh.,** Mikʻayēl Varandean (H.Y.D-yean tesaban-gaghaparakhōsě), «Hayrenikʻ», Postʻěn, 1936, N 4 **(In Armenian)**.
12. **Varandean M.,** Veratsnwogh hayrenikʻě yew mer derě, Zhěnew, hrat. H. Y. Dashnaktsʻutʻean, 1910 **(In Armenian)**.
13. **Varandean M.,** Boghokʻě noragoyn patmutʻean mēj, Zhěnew, hrat. H. Y. D., 1911 **(In Armenian)**.
14. **Varandean M.,** H.Y. Dashnaktsʻutʻean patmutʻiwn, Yer., Yerevani hamals. hrat., 1992 **(In Armenian)**.
15. **Varandean M.,** Hayrenikʻi gaghapʻarě, Zhěnew, hrat. H.Y.D., 1904 **(In Armenian)**.
16. **Zakʻaryan S. A.,** Hayotsʻ aṛakʻelutʻyan aṛeghtsvatsě, «Banber Yerevani hamalsarani». Pʻilisopʻayutʻyun yev hogebanutʻyun, 2019, N 1 **(In Armenian)**.